

9084



[Handwritten signature]

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Շրջակա միջավայրի նախարար

Համբարձում Մաթևոսյան

«12» 08 2025թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 206 - 25

Նախաձեռնող՝

«ՅԱՌԴ» ՍՊԸ

Շենգավիթ, Մանթաշյան փ. շենք 28Ա, 51

Գործունեությունը՝

Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա
28/26 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի
կառուցում
ք. Երևան,

Առդիր՝ 4 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱԿԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 206 - 25

«12» օգոստոսի 2025թ.

**Երևան քաղաքի Արշակունյաց պողոտա 28/26 հասցեում
բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման աշխատաքների շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Նախաձեռնող՝

«ՅԱՌԴ» ՍՊԸ

Ներկայացված նյութեր՝

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն,
նախագծային փաստաթղթեր

Գործունեության տեսակ՝

«Բ» կատեգորիա

Գտնվելու վայրը՝

Երևանի Շենգավիթ վարչական շրջանի
Արշակունյաց պողոտա 28/26

Ներածական մաս. «ՅԱՌԴ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Երևանի, Արշակունյաց պողոտա 28/26 հասցեում կառուցել բազմաբնակարան բնակելի շենք: Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի բ. ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության համար հիմք է հանդիսացել պատվիրատուի հաշվետվությունը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականը՝ № 02112023-01-0300, / ծածկագիրը՝ 01-011-0054-0178/, Երևան համայնքի ղեկավարի կողմից 15.11.2024թ.-ին տրված №01/50-01-635-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Կառուցապատվող հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ հասարակական կառուցապատման գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նկարագրական մաս. Նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Երևան քաղաքի կենտրոնական մասում, Շենգավիթ վարչական շրջանի տարածքում՝ Արշակունյաց պողոտա 28/26 հասցեում: Նախատեսվող գործունեության տարածքի ընդհանուր մակերեսը՝ համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման վկայականի, կազմում է 1832 մ²: Համաձայն ինժեներաերկրաբանական ուսումնասիրությունների եզրակացության և առկա ֆոնդային նյութերի տվյալների ստորգետնյա ջրերը տեղադրված են 15.5 մետր խորությունների վրա տեղամասում փորված հորատանցքերով գրունտային ջրեր չեն բացահայտվել:



Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը և այլն, բացակայում են հայցվող տարածքում: Ինժեներաերկրաբանական պայմանները բարենպաստ են շինարարական աշխատանքներ իրականացնելու համար:

Համաձայն հաշվետվության մեջ ներկայացված տեղեկատվության՝ Կարմիր գրքերում գրանցված բուսատեսակներ և կենդանատեսակներ գործունեության ենթակա տարածքում չեն հայտնաբերվել: Նախատեսվող գործունեության տարածքը չի առնչվում բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների հետ: Նախատեսվող գործունեության տարածքը ազատ է կառուցապատումից, ասֆալտապատ է, ծառաթփային բուսականություն չկա, հարևանությամբ են գտնվում հասարակական և բնակելի կառույցներ:

Շենքը ունենալու է 3 ստորգետնյա և 18 վերգետնյա հարկեր: Ստորգետնյա հարկերում տեղակայված կլինեն ավտոկայանատեղեր՝ նախատեսված 90 մեքենաների կայանման համար: Առաջին վերգետնյա հարկը՝ $\pm 0,00$ նիշով՝ լինելու է հասարակական նշանակության, այս նիշով է նախատեսվելու նաև մուտքը դեպի շենքի աստիճանավանդակ: Երկրորդ վերգետնյա հարկը նույնպես հասարակական նշանակության է՝ արտաքին աստիճաններից մոտեցման հնարավորությամբ: Սկսված 7,80 նիշից տեղակայվելու են 16 բնակելի հարկերը, յուրաքանչյուր հարկի բարձրությունը 3,30 մ: Երրորդից տասնչորսերորդ վերգետնյա հարկերում կլինեն առավելագույնը 8 բնակարան, ընդհանուր բնակարանների թիվը 120: Աստիճանավանդակի դռները նախատեսված են հակահրդեհային և ինքնափակվող: Ավտոկայանատեղիում նախատեսված են հակահրդեհային ռեզերվուարներ և պոմպակայան: Ապահովված է հրդեհաշիջման համակարգով: Բնակելի շենքի ավտոկայանատեղիի երեք հարկերը ($-4,00$ նիշ, $-7,30$ նիշ և $-10,60$) արտակարգ իրավիճակների ժամանակ ծառայելու են, որպես ապաստարան: Հարկերում առկա են սանհանգույցներ, առանձնացված ծխահեռացումը, սեղմ ժամկետներում կացության համար անհրաժեշտ պարագաներ, ինչպես նաև հակահրդեհային բաքեր:

Նախատեսվող գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշներն են՝

- հողատարածքի ընդհանուր մակերես՝ 1832 մ²,
- կառուցապատման մակերես՝ 853.37 մ²,
- բարեկարգման մակերես՝ 139.9 մ²,
- կանաչապատման մակերես՝ 839.17 մ²,
- շենքի ընդհանուր շինարարական մակերեսը՝ 19553.30 մ²,

Բնակելի շենքի ջրամատակարարումը և ջրահեռացումը նախատեսված է իրականացնել համաձայն «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ի կողմից տրված ՎՋ 679 1203 տեխնիկական պայմանների: Գազամատակարարումը նախատեսված է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից 02.12.2022 թվականին տրված N 268 տեխնիկական պայմանի, էլեկտրամատակարարումը՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 06.12.2022 թվականին տրված N 85499111 տեխնիկական պայմանի:

Հողային աշխատանքների իրականացման ընթացքում ընդհանուր հողային հանույթը՝ կազմելու է 15500 մ³, որից հետլիցքը՝ 3000 մ³, մնացած 12500 մ³ հողային զանգվածը նախատեսված է տեղափոխել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր: Նախագծով նախատեսված շինարարական



աշխատանքների ավարտից հետո ազատ մնացած ողջ տարածքները բարեկարգվելու և կանաչապատվելու են գլխավոր հատակագծով նախատեսված «էկոտոմետ» սիզամարգի ցանքով և տնկվելու են ծառեր: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված կլինեն քանդման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ: Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված կլինեն առաջացող փոշու արտանետումների հետ՝ քանդման, փորման աշխատանքների ընթացքում, նաև վառելիքի արտանետումների հետ՝ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ և այլն:

Համաձայն գնահատման հաշվետվության շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխարգելման և մեղմացման համար իրականացվելու են բնապահպանական միջոցառումներ և մշտադիտարկումներ, որոնք ներառված և նկարագրված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության համապատասխան բաժիններում:

Բնապահպանական միջոցառումների և մշտադիտարկումների համար նախատեսված է ամբողջ շինարարության ընթացքում 2 380 000 ՀՀ դրամ:

Պատճառաբանական մաս. օրենսդրությամբ սահմանված կարգով, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացվել են հանրային լուծումներ: Հաշվետվության վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, քաղաքաշինության կոմիտեից, կադաստրի կոմիտեից, Երևանի քաղաքապետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից: Երևանի քաղաքապետարանի կողմից ստացվել է կարծիք՝ նախագծով նախատեսված կանաչապատ տարածքների մակերեսների և դրանց ճարտարապետահատակագծային առաջադրանքի անհամապատասխանության վերաբերյալ: Նշվածը ստացված դիտողությունների ու առաջարկությունների հետ միասին ուղղարկվել է ընկերությանը լրամշակման: Նախաձեռնողի կողմից գնահատման հաշվետվությունը լրամշակվել է թերի, մասնավորապես՝ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված դիտարկումները. «ներկայացված նախագծի գլխավոր հատակագծում կանաչապատ տարածքում ներառված է նաև հրշեջ մեքենաների շարժման ուղեգիծը, իսկ նախագծի բացատրագրում և հաշվետվության «1.5.2 Նախատեսվող գործունեության նկարագիր» բաժնում նշված է «հրշեջ մեքենաների անցուղիները կանաչ հատվածներում նախատեսվում են գեղանցով», ինչը չի համապատասխանում 15.11.2024թ. Երևան համայնքի կողմից տրված N01/50-01-635-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքի 9.5 և 9.6 կետերով (կառուցապատման տոկոսը մինչև 60 %, ներառյալ շենքերը սպասարկող ճանապարհներն ու սավաճքները, կանաչապատման տոկոսը՝ 40 % և ավելի) սահմանված պահանջներին»: Գրությամբ նշվել է նաև, որ ընկերության կողմից Արշակունյաց պողոտա 28/26 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքի տարածքի կանաչապատման նախագիծն աշխատակազմի



բնապահպանության վարչության համաձայնեցմանը չի ներկայացվել: Լրամշակված հաշվետվությունը կրկին ուղղարկվել է կարծիքի Երևանի քաղաքապետարան, և ստացվել է նույն դիտարկումներով կարծիք:

Վերոնշյալից ակնհայտ է, որ ՇՄԱԳ լրամշակված տարբերակում «ՅԱՌԴ» ՍՊԸ-ի կողմից հաշվի չեն առնվել Երևանի քաղաքապետարանի դիտարկումները և նախագծում չի ապահովվել 15.11.2024թ. Երևան համայնքի կողմից տրված N01/50-01-635-24 ճարտարապետահատակագծային առաջադրանքի 9.5 և 9.6 կետերով (կառուցապատման տոկոսը մինչև 60%, ներառյալ շենքերը սպասարկող ճանապարհներն ու սալվածքները, կանաչապատման տոկոսը՝ 40 % և ավելի) սահմանված պահանջներին:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերոնշյալը և ղեկավարվելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասով և 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝ «ՅԱՌԴ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևանի Շենգավիթ վարչական շրջանի Արշակունյաց պողոտա 28/26 հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
տնօրենի պարտականությունները կատարող



Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝

Հովակիմ Ֆրունզիկյան